ԵՊՀ ԻՄ-ում ստացած կրթությունից շրջանավարտների բավարարվածության հարցման արդյունքների ամփոփում /2014-15 ուստարի/

Հաշվետվություն

2015թ-ի հունիսին ԵՊՀ Իջևանի մասնաճյուղում ամփոփիչ ատեստավորման քննությունների ավարտից հետո անց է կացվել հարցում մասնաճյուղի հեռակա ուսուցման բաժնի շրջանավարտների շրջանում: Հարցման ***նպատակն էր*** ուսումնասիրել ԵՊՀ ԻՄ-ի շրջանավարտների բավարարվածությունը.

1. կրթական ծրագրերի բովանդակությունից, ուսուցման մեթոդաբանությունից,
2. ուսումնական գործընթացի կազմակերպումից,
3. ուսումնառության ռեսուրսներից,
4. օժանդակ ծառայություններից,
5. համալսարանական միջավայրից,

բացահայտել նրանց կարծիքը կոռուպցիայի դրսևորումների վերաբերյալ, պարզել նրանց ընդհանուր գնահատականը ԵՊՀ ԻՄ-ում ստացած կրթությունից:

Այդ հարցման ***խնդիրներ են***.

1. Գնահատել շրջանավարտների բավարարվածությունը ուսումնառության ընթացքում ստացած տեսական գիտելիքների մակարդակից, ձեռք բերած գործնական հմտություններից և կարողություններից,
2. Գնահատել նրանց բավարարվածությունը պրակտիկաներից ձեռք բերած մասնագիտական գիտելիքներից, գործնական հմտություններից,
3. Գնահատել բավարարվածությունը բուհում գործող գիտելիքների գնահատման համակարգի և ամփոփիչ ատեստավորման (ամփոփիչ քննության, ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի պաշտպանության) օբյեկտիվությունից,
4. Գնահատել բավարարվածությունը ուսումնական ռեսուրսների՝ լսարանների, համակարգչային սրահների, ուսումնական լաբորատորիաների, գրադարանի և ընթերցասրահի առկայությունից, մատչելիությունից, հարմարավետությունից և հագեցվածությունից, համացանցի արագությունից,
5. Գնահատել շրջանավարտների բավարարվածությունը մասնաճյուղի, ֆակուլտետների ղեկավարությունից, պրոֆեսորադասախոսական կազմից, ուսանողական կառույցներից,
6. Պարզել շրջանավարտների տեղեկացվածությունը օժանդակ ծառայությունների՝ Կարիերային նպաստող, խորհրդատվական, իրավունքների և շահերի պաշտպանության համար պատասխանատու մարմնի, վարչական, բուժկետի և անվտանգության պահպանմանն ուղղված ծառայությունների գործունեությունից, գնահատել այդ ծառայություններից օգտվելու և բավարարված լինելու աստիճանը,
7. Պարզել շրջանավարտների դիմումների և բողոքների, կրթական կարիքների վեր հանման և բավարարման ընթացակարգերի և մեխանիզմների աշխատանքի արդյունավետությունը,
8. Պարզել կոռուպցիոն երևույթների առկայության փաստեր,
9. իսկ ամենակարևորը, պարզել, թե շրջանավարտների որ մասը խորհուրդ կտա իր բարեկամներին և հարազատներին ընդունվել ԵՊՀ ԻՄ, ինչն ըստ էության կպարզի տարածաշրջանում մեր բուհի հեղինակությունը և պահանջվածությունը:

Ընթացիկ հարցումն անց է կացվել 2014թ.վերանայված և համալրված հարցաշարով:

Հարցման անցկացման և հարցման արդյունքների հաշվառման գործում ՄԿՈԱ բաժնին աջակցել է հեռակա ուսուցման բաժինը: Բաժնի աշխատակիցները իրականացրել են 184 շրջանավարտների լրացրած հարցաթերթերի տվյալների ներմուծում համապատասխան տվյալների բազա:

Ուսման ձևը	Ընդամենը	Ուսանողների քանակը					
		Բ/Բ	ԿՄՖ	ՀԼԳ	Մ/Հ	Պատմ.	Տնտ.
հեռակա	**184**	**18**	**18**	**33**	**40**	**34**	**41**

Ապա ՄԿՈԱ բաժնում կատարվել է.

- այդ տվյալների մշակում և վերլուծություն ըստ մասնագիտությունների,
- 2010-11, 2012-13 ուստարիների շրջանավարտների հարցման արդյունքների հետ համեմատական վերլուծություն:

Մշակված տվյալները կներկայացնենք աղյուսակների և դիագրամների միջոցով: Նշենք, որ մշակված տվյալները կտեղադրվեն մասնաճյուղի էլ. Կայքի “Որակի կառավարման գործընթացներ” բաժնում: Բոլոր մշակված տվյալները, և շրջանավարտների առաջարկները կուղարկվեն ֆակուլտետներ և հեռակա ուսուցման բաժին: Այդ տվյալները ցանկալի է, որ ուսումնասիրվեն և կատարվեն համապատասխան հետևություններ, և նպաստեն ուսումնական գործընթացի, կրթական ծրագրերի և ռեսուրսների հետագա բարելավմանը:

Հարցման արդյունքները ներկայացնենք հարցաթերթի բաժիններին համապատասխան, խմբավորված ըստ իրենց ուղղվածության:

1. Հարցմանը մասնակցած հեռակա ուսուցման բաժնի 184 շրջանավարտներից 29-ը պատրաստվում են շարունակել իրենց ուսումը, որը ողջունելի փաստ է հեռակա ուսուցման համակարգում սովորողների համար

1.5	Պատրաստվում ե՞ք շարունակել Ձեր ուսումը	**29**		4	4	7	10	4
	Հարց	**Հաշվեկշիռ**	**Բ/Բ**	**ԿՄՖ**	**ՀԼԳ**	**Մ/Հ**	**Պատմ**	**Տնտ**
1.5	Պատրաստվում ե՞ք շարունակել Ձեր ուսումը	**15,8%**	0,0%	22,2%	12,1%	17,5%	29,4%	9,8%

ընդ որում հարկ է նշել, որ անցած ուսումնական տարվա արդյունքներն ադ առումով այնքան էլ գոհացուցիչ չեն եղել,

Պատրաստվում ե՞ք շարունակել Ձեր ուսումը

Թիվ	ուս.տարի	Հաշվեկշ.	ԱնգԼ	Կ/Ա	ԿՄՖ	Բ/Բ	ՀԼԳ	Մ/Հ	Պատմ	Սերվիս	Տնտ	ՖրԼ
1	2011-12	**32,4%**	36,4%		42,3%	42,9%	24,0%	33,3%	35,5%	12,0%	35,7%	36,4%
2	2013-14	**28,1%**	53,6%	15,4%	36,0%	0,0%	28,6%	18,3%	26,4%	15,0%	30,0%	75,0%
3	2014-15	**15,8%**			22,2%	0,0%	12,1%	17,5%	29,4%		9,8%	

հետևաբար այստեղ մասնաճյուղը, ֆակուլտետները խնդիր ունեն պարզելու շրջանավարտների մոտ ուսումը շարունակելու ցանկության նվազման պատճառները:

2. Շրջանավարտների բավարարվածությունը կրթական ծրագրերի բովանդակությունից, ուսուցման մեթոդաբանությունից և ուսումնական գործընթացի կազմակերպումից

Այս բաժինը վերլուծելու համար հարցերը խմբավորվել են ըստ ուղղավուծությունների.

ա) Վերլուծվել է շրջանավարտների բավարարվածությունը ուսումնառության ընթացքում ձեռք բերած տեսական գիտելիքների, գործնական հմտությունների և կարողությունների, մասնագիտական կոմպետենցիաների ձևավորման մակարդակից: Ըստ մասնագիտությունների այն ունի հետևյալ պատկերը.



Միջին գնահատականները վկայում են, որ մեր շրջանավարտները բավարարված են իրենց ձեռք բերած տեսական գիտելիքներից (4.57) և մասնագիտական կարողություններից (4.51), սակայն նրանք գտնում են, որ ԵՊՀ ԻՄ-ում մատուցվող դասընթացները այնքան էլ չեն օժանդակում մասնագիտական կոմպետենցիաների ձևավորմանը (միջին գնահատականը 4.37)՝ համեմատած գիտելիքների ձեռք բերման հետ:



Նախորդ ուստարիների հետ համեմատումն ունի հետևյալ պատկերը և այն վկայում է բոլոր պարամետրերով աճի մասին:



բ) *Շրջանավարտների բավարարվածությունը պրակտիկայից*

Ներկայացնում ենք պրակտիկայից շրջանավարտների բավարարվածության գնահատականներն ըստ մասնագիտությունների: Նրանք արտահայտել են իրենց բավարարվածությունը պրակտիկաների միջոցով մասնագիտական որակների, գիտելիքների և գործնական հմտությունների ձեռք բերման և ամրապնդման մակարդակի վերաբերյալ: Հարկ է նշել, որ մի քանի մասնագիտությունների գծով այդ արդյունքները գոհացուցիչ չեն: Մասնավորապես «Մանկավարժություն և հոգեբանություն» մասնագիտության հեռակա ուսուցման բաժնի շրջանավարտները բավարված չեն պրակտիկայի միջոցով մասնագիտական որակների ձևավորման, գիտելիքների, առավել ևս գործնական հմտությունների ամրապնդման մակարդակից, ինչը մասնագիտական ամբիոնի առջև լուրջ խնդիրներ է դնում, որպեսզի նրանք վերանայեն պրակտիկաների կազմակերպման իրենց մեթոդաբանությունը և թեմատիկան:



Չնայած այդ ամենին, նախորդ ուստարիների համեմատ պրակտիկայից բավարարվածության միջին միավորը էապես բարելավվել է (ըստ հաշվետու ուստարում՝ միայն հեռակա ուսուցման համակարգի տվյալների):



Նշենք, որ հարցման բոլոր արդյունքներն ըստ հարցաթերթում ընդգրկված բոլոր հարցերի մանրամասն ներկայացված են հատուկ կազմված ամփոփ տեղեկագրի մեջ:

Այդ հարցումների արդյունքներով շրջանավարտներն ընդհանուր առմամբ բավարարված են մասնաճյուղի ուսումնառության ռեսուրսներից. լսարաններից, լաբորատորիաներից, համակարգչային սրահներից, նրանց կահավորանքից, մատչելիությունից (բարձր է 4.20-ից), համացանցի մատչելիությունից և արագությունից (բարձր է 4.53-ից), գրադարանի և ընթերցասրահի հագեցվածությունից, կահավորանքից և աշխատաժամերից (4.40-4.72):

Շրջանավարտների բավարարվածությունը կարիերային նպաստող, խորհրդատվական, իրավունքների և շահերի պաշտպանության մարմնի, վարչական, բուժկետի, անվտանգության պահպանմանն ուղղված ծառայություններից ներկայացնենք հետևյալ ամփոփ աղյուսակով.

	Ծառայության անունը	Տեղեկացվա՞ծ եք	Օգտվու՞մ եք	Որքանո՞վ եք բավարարված
1.	կարիերային նպաստող	58.7%	45.7%	79%
2.	խորհրդատվական	68.5%	**59.8%**	81.3%
3.	Իրավունքների և շահերի պաշտպանության համար պատասխանատու մարմին	**74,5%**	56,0%	83,3%
4.	Վարչական	69,6%	54,9%	86,0%
5.	Բուժկետ	71,2%	53,3%	86,6%
6.	Անվտանգության պահպանում	72,8%	54,9%	**88,4%**

Այս տվյալները մասնաճյուղի համար բացում են կարևոր մի խնդիր, որ մասնաճյուղում կարիերային նպաստող ծառայությունների աշխատանքը պետք է ակտիվացնել:

Կային հարցեր, որոնց միջոցով անհրաժեշտություն կար գնահատելու շրջանավարտների բավարավածությունը մասնաճյուղի ղեկավարությունից, ֆակուլտետի ղեկավարությունից, պրոֆեսարադասախոսական անձնակազմից, ուսանողական կառույցների (ՈՒԽ, ՈՒԳԸ) աշխատանքից,

	Բավարավածությունը.	Միջ. հաշվեկշիռը
1	ԵՊՀ ԻՄ ղեկավարությունից	95.3%
2	Ֆակուլտետի ղեկավարությունից	**96.6%**
3	Պրոֆեսարադասախոսական անձնակազմից	96.0%
4	Ուսանողական կառույցների (ՈՒԽ, ՈՒԳԸ) աշխատանքից	**91.3%**

Հաշվետու ուստարվա հարցման մեջ վերլուծման տեսանկյունից էական նշանակություն ունի ուսանողական կարիքների վերհանման հնարավորությունների, այդ կարիքների լուծման մակարդակի վերաբերյալ հարցերը: Ըստ հարցման արդյունքների շրջանավարտների 92.3%-ը գտնում է, որ իրենց հնարավորություն է տրվում վեր հանել իրենց կրթական կարիքները և 91.5%-ը գտնում է, որ իրենց վեր հանած կարիքները բավարարվում են:

Եվ վերջապես, նշենք, որ շրջանավարտները մասնաճյուղում ստացած իրենց կրթությունը գնահատում են միջին 4.65 միավորով, ընդ որում ամենաբարձր գնահատական տվել են «Պատմություն» մասնագիտության շրջանավարտները (միջ. միավորը՝ 4.79), իսկ ամենացածր գնահատականը՝ «Բնապահպանություն և բնօգտագործում» մասնագիտության շրջանավարտները (4.33), թեպետ որպես արդյունք դա նույնպես վատ չէ: Համեմատական պատկերը նախորդ ուստարիների նկատմամբ հետևյալն է.



«Խորհուրդ կտա՞ք Ձեր մերձավորներին և ընկերներին ընդունվել ԵՊՀ ԻՄ» հարցին մասնակիցների 91.8% -ը դրական պատասխան է տվել (նախորդ ուստարի՝ 89.8%):

Հարցաթերթը պարունակել է նաև բաց հարցեր, որոնց արդյունքները խմբագրվել են և հարկ է նշել, որ ըստ պատասխանների շրջանավարտներին դուր է եկել դասախոսական կազմը և նրանց կողմից տրվող գիտելիքները, նրանց բարձր մակարդակը, վերաբերմունքը և տրամադրվածությունը, անաչառությունը, նվիրվածությունը, կիրառվող ուսուցման մեթոդները և ներկայացնելու ձևը, մասնաճյուղի աշխատակիցները և նրանց համախմբվածությունը, մատչելի ուսուցումը և բնակավայրին մոտ լինելը: Իսկ թե ինչ կցանկանային փոխել մասնաճյուղում, հարցման մասնակիցները նշել են. ավելացնել գործնական պարապմունքների քանակը և ժամաքանակը, համալրել գրադարանի գրքերի ցանկը, ավելի մատչելի դառձնել անապահով ընտանիքների ուսանողների ուսման վարձերը, հանել հեռակա ուսուցման բաժնում թեստային համակարգը: Նրանք արտահայտել էին իրենց կարծիքները և գրել մի շարք առաջարկություններ: Շրջանավարտները գտնում են, որ այս աշխատանքի համար դասախոսները շատ քիչ են վարձատրվում, իրենց շնորհակալությունն են արտահայտում ամբողջ պրոֆեսորադասախոսական անձնակազմին, առաջարկում են ավելացնել քննություններին պատրաստվելու ժամանակը, նորմավորել քննությունների և ստուգումների միջև ընկած ժամանակահատվածը և այլն:

Ամփոփելով հարցման արդյունքները նշենք, որ դրանք օգնելու են համապատասխան կառույցներին իրենց հետագա աշխատանքներում: Վերանայվելու են որոշ գործընթացներ, ծրագրեր, մեթոդներ, որպեսզի շրջանավարտները ստանան բարձր ուսումնառություն և բավարարված լինեն թե մասնաճյուղում ստացած կրթությունից, թե ուսումնական միջավայրից, և թե բոլոր ծառայությունների աշխատանքից ու ղեկավարումից:

Հարցման ամբողջական արդյունքները տեղադրվելու են մասնաճյուղի պաշտոնական կայք-էջում:

Մասնագիտական կրթության որակի ապահովման բաժին

20.06.2015թ.